շուրջը՝ «Յիշատակ է Նղինարին վրդուհոյն ի «վայելումն եղբօրն Նատի վրդպետին» Թվին ՌՃԿԴ-ին» մեծութիւնն է՝ 142 սմ. երկարութիւն. 44—32 սմ. լայնութիւն. վերոցի կողմից 28 սմ. և ծայրը կոլոր։ Այս ծածկոցը իր ժամանակում ձեռագործների մէջ օրինակելի կհամարուի՝ զուտ հայկական գործ։

16. Մի զոյգ ծածկոց մինը սկհոյ, միւսը աւանդատան։ Աւանդատան ծածկոցը ներկայացնում է մի քարդի անոտա 18 ծաղերից բաղկացած, տակին և երկու կողերին լայն ոսկեթել լուսանցազարդ ծաղկենկար զարդարանք։ Անոտար գործած է կարմիր ատլասի վրայ, իսկ լուսանցազարդն ու եղբազարդը մանրագոյն ատլասի վրայ։ Յիշատակագրութիւնն է, ստորից բարձր ծածկոցի վերևի մասում երեք տողից՝ «Յիշատակ է ծածկոցս Մարիամին եւ որդոցն իւրոց Աւթանդիլին որ եառուն Թադէոս առաքելոյն սուրբ վանքին թվ. ՌՄԺԹ.» մեծութիւնն է՝ երկարութիւնն 90 սմ. լայնութիւնը 50 սմ եզրանկարով հանդերձ։

17. Իսկ միւսը՝ սկհոյ քող. քող սև ապլուխի վրայ ասեղնագործած մի արեգակ. մէջ տեղը մի խաչ, իսկ ապլուխի չորս ծայրին մի մի խաչ. արեգակի չորս կողմը չորս հրեշտակ, ապլուխի շուրջը ժապաւէնաձև եզրազարդ, մէջտեղի պարապ տեղերում ցինաձև զարդեր։ Ճաճանչաւոր արեգակի շուրջը բոլորակ շրջանակ, իսկ սորա մէջ էլ յիշատակագրութիւն, որ է այսպէս. «Յիշատակ է Սէթինճի խաչատուրին ի դուռն սուրբ առաքելոյն Թադէոսի ի կղմուրէ առքի թվ. ՌՄԼ.» Մեծութիւնն է՝ 90×90 սմ. բոլոր գործուածքը արծաթաթելերով։

(Շարունակելի)

## Վեհափառ Հայրապետի ուղևորութեան մասին ստացած վերջին տեղեկութիւնները:

Բորժոմ ժամանել է Նորին Սրբութիւնը ամսոյս 4-ին, առ. $8\frac{1}{2}$ ժամին, և նոյն օրը ժամը մօտ 2-ին այցելութիւն է գնացել Նորին Բարձրութիւն Մեծ իշխան ՆԻԿՈԼԱՅ ՄԻԽԱՅԼՈՎԻՉԻՆ, որև ժամը 6-ին փոխադարձ այցելութիւն է տուել Վեհափառին. տեսակցութիւնը տևել է 35 րոպէ։ Յաջորդ օրը, ամսի 5-ին առաւօտեան, Վեհափառ Հայրապետը մեկնելով Բորժոմից՝ ժամը 3-ին հասել է Ախալցխա և փառաւոր ընդունելութիւն է գտել։ Ամսոյս 8-ին Վեհափառը գնացել է Ադասթուման և յաջորդ օրը այցելել Նորին Կայսերական Բարձրութիւն Թագաժառանգ Գէորգի Ալէքսանդրովչին։

Անդուսմ ստացուած վերջին հեռագիրը հաղորդում է, որ Վեհափառ Հայրապետը ամսոյս 11-ին, առ. ժ. 9-ին Ախալցխայից մեկնել է դէպի Ախալքալակ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ.

1. ԽՕՍՔԻ Համաձայն գործ . . Կ. Վ. . . 225.
2. ՄԻ ՆՈՐ Կրօնական Թատրերգութիւն. Գ. Մ. 226.
3. ՄԻ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ Անցեալից Կ. Վ. . . 229.
4. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ . . . . 230

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

5. Մ. ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՑԻՈՅ Պատմութեան ձեռագիրները. . . . Խ. Վ. . 233.
6. ՄԵՐ ԳԵՏԱՑԻՔ . . Մ. Հայկունի . 239.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ.

7. ԲԵՆԵԿԸ . . . Արեղայ . . 243.
8. ԳԵՂԵՑԻԿ Ընթերցանութիւն. Մ. Յ. . . 245.
9. ՄԱՆՐԱԼՈՒՐՔ . . . . . . 248.

ԱԶԳԱՅԻՆ.

10. ՀԱՅ Հոգևորականութեան մէջ կղեր. ոգի որոնողները . . Կ. Վ. . . 250.
11. ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ . . . . 254.
Վեհափառ Հայրապետի ուղևորութիւնը . . .
Կաթուղիկոս Ամենայն Հայոց . . . . . . .
ՄԱՅՐ ԱԹՈՌ. . . . . . . .
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ . . . . . . . .
1. ՌՈՒՍԱՀԱՅՔ . . . . . .
Բեսսարաբիոյ թեմ . . . . . .
Աստրախանի թեմ . . . . . . .
2. ՏԱՃԿԱՀԱՅՔ. . . . . . . .
3. ՊԱՐՍԿԱՀԱՅՔ. . . . . . .
Հնութիւններ. . . . . . . .

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ